

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐԻԱՆԱ ՌՈԲԵՐՏԻ ԲԱԴԱԴՅԱՆ

**ԱՆԶԻ ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ,
ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ
(զուգադրական քննություն)**

ժ.02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ ք.գ.դ., պրոֆեսոր Ս. Գալստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ք.գ.դ., պրոֆեսոր Լ. Մ. Խաչատրյան

ք.գ.թ. դոցենտ Մ. Գ. Դալայան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովհաննես Թումանյանի
անվան պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի հոկտեմբերի 9-ին, ժամը՝
15:00 - ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող
ԲՈՀ -ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. հունիսի 20 - ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, ք.գ.թ., դոցենտ՝

Ն. Մ. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Յուրաքանչյուր ժողովրդի բանավոր խոսքը ունեցել է և ունի բազմերանգ դրսևորումներ, որոնք անցյալի մատենագիրների քրտնաջան աշխատանքով հավաքվել, ի մի են բերվել, իսկ հետագայում խմբավորվել, մշակվել ու դարձել են մշակույթի կատարյալ ձևեր: Դարձվածքները կամ դարձվածային միավորները ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են և արտահայտում են նրա լեզվամտածողության ինքնատիպությունն ու յուրահատկությունը: Դարձվածքներում իրենց արտահայտությունն են գտել ժողովրդի հարուստ կենսափորձը, նրա պատկերացումները օբյեկտիվ աշխարհի առարկաների և երևույթների մասին, վերաբերմունքը մարդկային հարաբերությունների նկատմամբ: Դարձվածաբանական միավորները խոսքին տալիս են պատկերավորություն, արտահայտչականություն, դիպուկություն և ձերբազատում խոսքը միօրինակությունից, տաղտկալիությունից ու չորությունից: Դարձվածաբանական միավորներով միտքն առավել դիպուկ և հստակ է հասնում նպատակին՝ ազատելով խոսքը միապաղաղությունից: Դարձվածքների ուսումնասիրությամբ զբաղվում է լեզվաբանության համեմատաբար նոր բաժիններից մեկը՝ դարձվածաբանությունը: Չնայած և՛ հայ, և՛ արտասահմանյան լեզվաբանների բավական թվով ուսումնասիրություններին՝ այնուամենայնիվ լեզվի այս բաժնի ուսումնասիրությունը չի կարելի ավարտված համարել: Որոշ լեզվաբաններ (Վ. Լ. Արխանգելսկի, Վ.Վ. Վինոգրադով, Ա. Վ. Կունին, Վ. Ն. Տելիա, Ն.Մ. Շանսկի, Ա. Մուրվալյան, Ա. Սուքիասյան և ուրիշներ) դարձվածք են համարում ոչ միայն իդիոմատիկ կապակցությունները, այլև հարադրական կազմություն ունեցող բառերը, առածները, ասացվածքները, թևավոր խոսքերը, օրինանքներն ու անեծքները, նույնիսկ բաղադրյալ տերմինները՝ դրանով իսկ ընդարձակելով դարձվածքի սահմանները: Ոմանք (Ա. Մ. Բաբկին, Բ.Ա. Լարին, Վ. Ի. Մոկիենկո, Ա. Ի. Մոլոտկով, Ն.Ն. Ամոսովա, Հ. Գևորգյան, Պ. Ա. Բեդիրյան և ուրիշներ), ընդհակառակը, նեղացնում են դարձվածքի ըմբռնումը՝ դրան հատկացնելով միայն իդիոմատիկ կապակցությունները: Քննության են առնվել դարձվածային միավորներ՝ տարբեր հիմնական բաղադրիչներով, ուսումնասիրվել են կենդանիների անվանումներ, գունանիշ բաղադրիչներ, մարմնի մասերի անվանումներ, սննդանուններ պարունակող դարձվածքները:

Մեր հետազոտությունը նվիրված է անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորների քննությանը՝ հայերենի, ռուսերենի և անգլերենի նյութի հիման վրա: Սրանով էլ պայմանավորված է աշխատության գիտական նորոյթը. առաջին անգամ փորձ է արվում զուգադրելու հայերենի, ռուսերենի և անգլերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորները, բացահայտելու դրանց իմաստաբանական, կառուցվածքային, քերականական, արտահայտչական յուրահատկությունները, ներկայացնելու դարձվածքների համարժեքությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակը հայերենի, ռուսերենի և անգլերենի՝ անձի հատկանիշ ցույց տվող դարձվածային միավորների կառուցվածքային, քերականական, ռճական, իմաստաբանական, ծագումնաբանական առանձնահատկությունների զուգադրական քննությունն է, որն իր հերթին թույլ կտա նմանությունների և տարբերությունների վերլուծության հիման վրա վեր հանել դարձվածային համարժեքները երեք լեզուներում: Այս ամենը հնարավորություն է տալիս կատարելու տեսական բնույթի ընդհանրացումներ ցեղակից և ոչ ցեղակից լեզուների դարձվածաբանական համակարգերի բնագավառում:

Ատենախոսության խնդիրներն են. հայերենի, ռուսերենի և անգլերենի՝ անձի հատկանիշ ցույց տվող դարձվածքների իմաստակառուցվածքային, ձևաբանական, շարահյուսական, ձևաիմաստային առանձնահատկությունների և իմաստային դաշտերի զուգադրական քննությունը, դարձվածքների ծագմանն ու առաջացմանն առնչվող հարցերի ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության տեսական և գործնական արժեքը: Հետազոտության տեսական արժեքը դիտարկվող լեզուների՝ անձի հատկանիշ ցույց տվող դարձվածքների դարձվածքների իմաստաբանական, կառուցվածքային և քերականական առանձնահատկությունների միջև եղած ընդհանրությունների և տարբերությունների բացահայտումն է: Աշխատանքը կարող է արդյունավետ կիրառություն գտնել թարգմանչական գործում, նպաստել բառարաններ կազմելու գործընթացին, օգտագործվել դարձվածաբանությանը նվիրված դասընթացներում, նպաստել դիտարկվող լեզուների գործնական ուսուցմանը:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք բաժանված են ենթագլուխների, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ քննվում են դարձվածաբանության տեսությանն առնչվող և հատկապես դարձվածաբանության սահմանների, դարձվածաբանական միավորների տարբերակման չափանիշների հարցերը, ինչպես նաև հայ, ռուս և արտասահմանյան լեզվաբանների կարծիքները դարձվածային միավորների սահմանումների և դարձվածաբանության մասին: Ներկայացվում են դարձվածքը լայն և նեղ իմաստով ըմբռնող լեզվաբանների կարծիքները, իմաստաբանական, կառուցվածքային, քերականական վերլուծության վերաբերյալ հարցերը:

Ատենախոսության առաջին գլուխը (Անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորների իմաստակառուցվածքային տիպերը) բաղկացած է հինգ ենթագլուխներից: Աշխատանքում քննվում են անձի հատկանիշ ցույց տվող դարձվածքների իմաստակառուցվածքային տիպերը հայերենում, ռուսերենում և անգլերենում: Աշխատանքի այս հատվածում ուսումնասիրվում են անձի հատկանիշ ցույց տվող դարձվածքները իմաստաբանական տեսակետից: Դարձվածքներն ունեն բազմատեսակ ձևաբանական կառուցվածք և բաղադրիչների բնույթով ու դրսևորումներով տարբերվում են իրարից, սակայն իմաստաբանական տեսակետից ընդհանրանում են և արտահայտում են միանման՝ այլաբերական - փոխաբերական իմաստ: Դարձվածքները խմբավորված են ըստ արտահայտած իմաստների՝ մտավոր հատկանիշ արտահայտող դարձվածային միավորներ, դրական և բացասական հույզեր արտահայտող դարձվածային միավորներ, անձի արտաքինը բնութագրող դարձվածային միավորներ, կենդանու անուն պարունակող անձի հատկանիշները բնութագրող դարձվածքներ, անձի հատկանիշ արտահայտող գունանուն բաղադրիչով դարձվածքներ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում իմաստային միաձուլության աստիճանով դարձվածային սերտաճումներ են. նրանց բաղադրիչներն անօտարելի և անփոփոխելի են:

Լեզուների միջև դարձվածային ընդհանրությունների և տարբերությունների առկայությունը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում ինչպես համեմատական լեզվաբանության, այնպես էլ բանախյուսական և ազգագրական ուսումնասիրությունների տեսակետից: Հայերենի, ռուսերենի և անգլերենի դարձվածքների տարբերությունները պայմանավորված են մշակութային տարբեր կաղապարումներով, ծագումնաբանական տարբեր

հիմքերով: Լեզուների ազգային ինքնատիպությունը և նրանց ընդհանրությունները այլ լեզուների հետ առավել վառ են արտահայտվում դարձվածքների իմաստային նրբերանգներում: Դարձվածային պատկերավորությունն ունի լեզվամտածողության այն առանձնահատկությունը, որ բնորոշ է տվյալ ժողովրդին, սերում է նրա պատմությունից, մշակույթից, կենցաղից, ավանդույթներից: Դիտարկվող լեզուներում՝ հայերենում, ռուսերենում, անգլերենում, անձի հատկանիշ արտահայտող դարձվածքները հանդես են գալիս կառուցվածքային տարբեր տիպերով՝ երկանդամ, եռանդամ, քառանդամ և բազմանդամ կառույցներով, բաղադրիչների համադասական և ստորադասական կապակցությամբ: Աշխատանքի մեջ բերվում են անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորներ՝ տարբեր կառուցվածքային տիպերով: Հայերենում, ռուսերենում և անգլերենում երկանդամ ածականական դարձվածքներ են հանդիպում գոյական + ածական և ածական + գոյական կառուցվածքային տիպերով: Գոյական + ածական կառուցվածքային տիպով կազմված անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորները հիմնականում շատ են հայերենում և պարունակում են մարմնի մասերի անվանումներ՝ սոմատիկ բառեր, և դրանց հատկանիշներն ընդգծող ածականներ: Դարձվածքներում ընդգծվում են հատկապես մարդկանց բնավորության գծերը: Մարմնի մաս անվանող միևնույն բաղադրիչը կարող է համադրվել բազմաթիվ ածականների հետ: Այս կառույցում դարձվածքի գերադաս անդամը գոյականն է: Օրինակ. *Գլուխը ծակ* - անխելք, ոչ լրջմիտ = *дырявая голова* = *have a head like a sieve*; *Գլուխը հասր* - հաստագլուխ. բթամիտ, անհասկացող = *a thick-headed thing; a fat head; a blockhead*: Հայերենում հանդիպում են նաև դերբայներով կառույցներ, որոնցից լայն տարածում ունի հարակատար դերբայը: Անորոշ առումով դրված գոյականներով կառույցների դեպքում ավելի որոշակի է զգացվում գերադաս հարակատար դերբայի դերը, իսկ երբ հարակատար դերբայը հանդես է գալիս որոշյալ առումով օգտագործված գոյականի հետ, ապա այդ դեպքում լրացում – լրացյալի կապն ավելի է սերտանում: Եվ՝ հայերենում, և՛ անգլերենում, և՛ ռուսերենում հանդիպում են գոյական + ածական և ածական + գոյական կառուցվածքային տիպով կազմված անձի հատկանիշ արտահայտող դարձվածքներ, իսկ ածական + նախդիր + գոյական կառույցը հատուկ է միայն անգլերենին, գոյական + գոյական + հարակատար դերբայ և գոյական + գոյական + ածական կառույցները՝ հայերենին:

Դիտարկվող երեք լեզուների դարձվածաբանական համակարգերում անվանողական դարձվածքների շարքն են դասվում նաև եղանակավորող դարձվածային միավորները, այդ թվում՝ նաև անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով եղանակավորող դարձվածքները: Եղանակավորող դարձվածքները խոսքին յուրատեսակ երանգ ու հուզական լիքք են հաղորդում, արտահայտում են խոսողի իմացական, գնահատողական կամ զգայական վերաբերմունքը և ունեն հուզարտահատչական բնույթ: Դրանք հիմնականում հաղորդակցական բնույթ ունեն և հանդես են գալիս որպես նախադասություններ: Օրինակ. *Աստված երկու բարիին մեկը փա (օրինանք - մաղթանք) - Տառապող, հիվանդ մարդուն: Աստված խելքդ առնի (խսկց. հանդիմանական խոսք) - Անխելք, չմտածված խոսք բռնողին: Օրդ սև ու մուօ լինի (անեծք) - Դժբախտ լինես: Տիպդ կտրվի կամ փիպը կտրվի (անեծք, երբեմն էլ՝ մտերմական հանդիմանություն) - Անշնորհք, անպիտան մարդուն:* Հիշյալ դարձվածքներում գործում են բայական և անվանական անդամներին բնորոշ քերականական կարգերը՝ թվի, դեմքի, հոդի, եղանակի: Եղանակավորող դարձվածքները եղանակավորող բառերի պես նախադասության անդամ չեն լինում և, հետևաբար, շարահյուսական պաշտոններ չեն կարող կատարել:

Հաղորդակցական դարձվածային միավորներ - Խոսքն ավելի պատկերավոր ու դիպուկ դարձնելու համար մարդիկ հաճախ օգտագործում են հաղորդակցական արժեք ունեցող դարձվածային միավորներ: Այս դարձվածային միավորները հանդես են գալիս ինչպես բառային, ձևաբանական, այնպես էլ շարահյուսական մակարդակներում և օժտված են նախադասությանը հատուկ բոլոր առանձնահատկություններով՝ քերականական կարգերով և հատկանիշներով: Ինչպես ցանկացած նախադասության, այնպես էլ հաղորդակցական դարձվածքներին հատուկ է ստորոգումը: Ուսումնասիրվող երեք լեզուներում անձի հատկանիշ արտահայտող հաղորդակցական դարձվածքներն օժտված են վերը նշված բոլոր առանձնահատկություններով: Յուրաքանչյուր նախադասություն արտահայտում է դատողություն և ունի տվյալ լեզվին հատուկ որոշակի կառուցվածք: Օրինակ. Մեջքը պինդ է: Վերնահարկը դատարկ է: Մարմանդ ջուր է: Լեզվի տակ փուշ չկա: Կարմիր կովը իր կաշվից դուրս չի գա: Խորամանկ աղվեսը չորս ոտքով է թակարդն ընկնում: Ըստ իրենց հնչերանգի և իրականության նկատմամբ խոսողի ունեցած վերաբերմունքի՝ ուսումնասիրվող երեք

լեզուներում դարձվածային նախադասությունները լինում են պատմողական, հարցական, հրամայական, բացականչական և խառը տիպի, ինչպես նաև հաստատական և ժխտական: Բերենք մի քանի օրինակ: *Երբ նա դուրս է գալիս, արևն ամոթից ամպի տակ է մտնում*, – շատ գեղեցիկ: *Խաչ ունի՞*՞ (խսկց.) – Անսիրտ, անխիղճ մարդու մասին: *Звезд с неба не хватают/ не хватаи* – (խսկց.) Միջին ունակությունների մարդ: *Мухи не обидет* – հլու, հնազանդ մարդ: *He is a regular flat – fish* – Հիմար երիտասարդ է: Պարզ նախադասության կառուցվածքով դարձվածային միավորները լինում են երկկազմ և միակազմ: Թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում և թե՛ անգլերենում ուսումնասիրվող հաղորդակցական դարձվածային միավորների մեջ մեծ թիվ են կազմում պարզ ընդարձակ նախադասությունները, որոնց մի մասում ենթական հանդես է գալիս իր լրացումներով, մյուս մասում՝ ստորոգյալը իր լրացումներով, կամ ենթական և ստորոգյալը՝ իրենց լրացումներով: Մեծ մասամբ հաղորդակցական նախադասություններն օգտագործվում են ժողովրդախոսակցական ոճում: Օրինակ. *Գայլի գլխին ավերարան ես կարդում, ասում է՝ ոչխարը սարը մնաց* – Անուղղելի է: *Ծառը որ վեր ընկնի, կացնավորը կշարանա* – Անպաշտպանի վրա բոլորը կհարձակվեն: *Мал золотник, да дорог* – Կարճահասակ երիտասարդ է, բայց օժտված է շատ դրական հատկանիշներով: *Better be born lucky than rich = He родись красиво, а родись счастливо* – Ավելի լավ է հաջողակ լինել, քան հարուստ: Բերված օրինակներից երևում է, որ առաձենրի և ասացվածքների փոխաբերական իմաստն արտահայտված է ամբողջական նախադասություններով: Սակայն գոյություն ունեն դարձվածային արտահայտություններ, որոնք իրենց փոխաբերական ընդհանուր կամ միասնական իմաստն արտահայտում են հոմանիշ բառերով կամ բառակապակցություններով: Օրինակ. *Բերանիցը կաթի համ է գալիս / բերանիցը կաթի հոտ է գալիս* – Դեռ անփորձ է, դեռ երեխա է: *Հազար ցավ ու դարդ տեսած* – Տանջված: *Իրար հետ հաց կիսած* – Մտերիմ:

Ատենախոսության **երկրորդ** գլուխը (Անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորների ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները հայերենում, ռուսերենում, անգլերենում) բաղկացած է չորս մասից: Ուսումնասիրվել են անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորների ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները հայերենում, ռուսերենում և անգլերենում: Ինչպես մյուս գոյականական

դարձվածային միավորները, այնպես էլ անձի հատկանիշ արտահայտող գոյականական դարձվածքներն ունեն գոյականի արժեք և օժտված են այդ խոսքի մասին բնորոշ ձևաբանական առանձնահատկություններով, օրինակ՝ հոլովի, թվի քերականական կարգերով հայերենում, ռուսերենում և անգլերենում, սեռի քերականական կարգով՝ ռուսերենում: Հայերենում ստորև նշված դարձվածքների գոյականներն օգտագործվում են միայն ուղղական հոլովով, օրինակ՝ *Դասարկ տակառ* - Անբովանդակ՝ անարժեք, բայց պոռոտախոս՝ մեծաբերան մարդ: *Խենթ գլուխ* - Քաջ՝ խիզախ մարդ: Անգլերենում ևս դարձվածքի գոյականն օգտագործվում է միայն ուղղական հոլովով, օրինակ. *A strong man* - (բառացի՝ ուժեղ մարդ) ուժեղ անձնավորություն: Դիտարկվող երեք լեզուներում էլ անձի հատկանիշ արտահայտող որոշ դարձվածքներում գոյականները կարող են օգտագործվել և՛ եզակի, և՛ հոգնակի թվով: Որոշ դեպքերում գոյականական արժեք ունեցող դարձվածքները լինում են կամ անեզական, կամ անհոգնական: Օրինակ. *Սիամի երկվորյակներ* - Անբաժանելի բարեկամներ = *Siamese twins = Сиа́мские близнецы*: Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքները նախադասության մեջ կարող են կատարել գոյական խոսքի մասին հատուկ շարահյուսական պաշտոններ. նրանք կարող են լինել ենթակա, ստորոգելիական վերադիր, ուղիղ և անուղղակի խնդիրներ, բացահայտիչ, կոչական և պարագաներ: Ածականական դարձվածային միավորները, այդ թվում՝ անձի հատկանիշ արտահայտողները, նախադասության մեջ կատարում են ածական խոսքի մասին բնորոշ շարահյուսական պաշտոններ՝ անկախ կառուցվածքային առանձնահատկություններից: Անձի հատկանիշ արտահայտող ածականական դարձվածքները շատ հաճախ հանդիպում են որոշիչ պաշտոնով: Այս երևույթը նկատելի է երեք լեզուներում: Հայերենում ածականական դարձվածքները կարող են կիրառվել որպես ենթակա, բացահայտիչ, խնդիրներ, պարագաներ, կարող են լինել կոչական: Հայերենի, ռուսերենի և անգլերենի ածականական դարձվածային միավորներն ուսումնասիրելիս նկատում ենք, որ դարձվածքները սերտաճումներ են՝ անփոփոխելի բաղադրիչներով: Ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները երեք լեզուներում մասամբ համընկնում են միայն համեմատություններում: Անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքներն օժտված են բայ խոսքի մասի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններով: Օրինակ. բայի անվանական բաղադրիչներն օժտված են *հոդի, թվի, սեռի*՝ ռուսերենում,

քերականական կարգերով, իսկ բայական բաղադրիչները՝ *սեռի, եղանակի, ժամանակի, դեմքի, թվի, հաստատական – ժխտականի* քերականական կարգերով հայերենում, ռուսերենում և անգլերենում և *կերպի քերականական կարգով* ռուսերենում և անգլերենում: Հայերենում, ռուսերենում և անգլերենում անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքները նախադասության մեջ հանդես են գալիս շարահյուսական տարբեր պաշտոններով: Ժամանակակից հայերենում, ռուսերենում և անգլերենում շարահյուսական մակարդակում բայական դարձվածքները ամենից հաճախ կարող են հանդես գալ որպես ստորոգյալ: Անգլերենում որոշ դարձվածքներ օգտագործվում են տարբեր կերպերի ժամանակաձևերով, սակայն հարկ է նշել, որ բայական դարձվածքները, այդ թվում նաև անձի հատկանիշ արտահայտող դարձվածքները գրեթե միշտ ժամանակային թերի հարացույց են ունենում, օրինակ՝ *Have the fit of the blues*-Վատ տրամադրություն ունենալ: Հայերենում հանդիպում են որոշ դարձվածային միավորներ, որ գործածվում են քերականական կարգերի՝ ժամանակի, դեմքի, թվի հարացուցային բոլոր դրսևորումներով, օրինակ՝ *Քիթը բարձր պահել, սիրտը չունենալ, կապը կտրել, խոտ ուրել, ածելի լիզել*: Դիտարկվող երեք լեզուներում բայական դարձվածային միավորների, այդ թվում նաև անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների ճնշող մեծամասնությունն օգտագործվում է բայի սահմանական եղանակի եզակի երրորդ դեմքով, ավելի քիչ են երկրորդ դեմքով կիրառվող դարձվածքները, իսկ դիմավոր ձևով գործածվողները առաջին դեմքով չեն գործածվում: Օրինակ. *Գրի սևն ու սպիտակը չտարբերել* - Գրաճանաչ չլինել: *Կոպեկի վրա դողալ* – Խիստ ժլատ լինել: *Հյուրի պես պահել* - Անհամարձակ լինել, քաշվել: Երեք լեզուներում գործում է նաև *հաստատման – ժխտման* քերականական կարգը: Հայերենում դարձվածային միավորների ժխտականը կազմվում է բայական բաղադրիչի վրա ավելացնելով ժխտական մասնիկը՝ *չ* կամ *մի*: Օրինակ. *Մեկի ջրին ձավար չգցվել* (խսկց.) - Անհուսալի, անվստահելի լինել: *Մայրը մատին չխփել / մայրը մատին չտալ* - Անտարբեր, անուշադիր լինել: *Մի թիզ լինել – մի թիզ չլինել* – Շատ փոքր: Ռուսերենում, ինչպես և հայերենում գերակշռում են հաստատական կառույցները, թեև կան նաև միայն ժխտական կառույցով գործածվող դարձվածքներ: Օրինակ. *Быть не из робкого/трусливого десятка* - Ուժեղ մարդ լինել: *Быть не из храброго десятка* (խսկց.)- Վախկոտ մարդ լինել: *Водой не разольешь* - Շատ մտերիմ լինել: Անգլերենում ևս բայական

դարձվածքների մեծ մասը, այդ թվում նաև անձի հատկանիշ արտահայտողներն օգտագործվում են հաստատական ձևով, թեպետ հանդիպում են նաև հաստատական – ժխտական հակադրություններ: Օրինակ. *Be not as green as one is cabbage – looking* - Այնքան միամիտ ու հիմար չլինել, որքան երևում է: Հաստատական ձևով օգտագործվելիս նշված դարձվածքները վերածվում են հարցական նախադասությունների, ինչպես հայերենում: Անգլերենում կան որոշ դարձվածային միավորներ, որոնք ունեն միայն ժխտական ձև: *Not to have (got) a brain in one's head* - Անխելք լինել: Կարող են հանդիպել *not* կամ *don't*, որտեղ ժխտական մասնիկը վերաբերում է բային, *no* ժխտական մասնիկը՝ գոյականին, կամ *never*, որը վերաբերում է մակբային: *Be no better than she should be* – Ոչ այնքան բարեսեր լինել: *No hand at smth* - Անփորձ լինել: *Not to know A from B* - Անգրագետ լինել: Ուսումնասիրվող երեք լեզուներում էլ կան դարձվածքներ, որ կարող են գործածվել և՛ հաստատական, և՛ ժխտական ձևով: Այս դեպքում *not* ժխտական մասնիկը անգլերենում, չ-ն հայերենում և *не*-ն ռուսերենում իմաստատարբերակիչ դեր չունեն: Գործիական հոլովը ևս վճռական գործոն է գոյականական կամ ածականական դարձվածքները մակբայաբար կիրառելու հարցում, օրինակ՝ *կոտորած սրտով, արյուն – քրտինքով*: Հարակատար դերբայի միջոցով նույնպես բայական դարձվածային միավորները մակբայական կիրառություն են ստանում, օրինակ՝ *երեսը թթված, երեսը պատռած, բերանը կապած*: Ռուսերենում հանդիպում են մակբայական դարձվածքներ, որոնք կազմված են գոյականական դարձվածքներով և նախդիրներով, օրինակ՝ *глаз на глаз, от доброго сердца, от/из глубины сердца*: Անգլերենում հաճախ մակբայական դարձվածային միավորները կազմվում են նախդիրով և լիմաստ գերադաս գոյականով: Ավելի շատ հանդիպում են հետևյալ նախդիրները՝ *at, under, in, from, under, by*, օրինակ՝ *in blood, off one's head, out of one's head*: Անգլերենում շատ տարածված են նախադաս *with* նախդիրով, ածականով և գոյականով կազմված մակբայական դարձվածային միավորները, օրինակ՝ *with a heavy hand, with a high hand, with an easy hand*. Շարահյուսական առումով՝ նշված երեք լեզուներում մակբայական դարձվածային միավորները նախադասության մեջ կատարում են մակբայ խոսքի մասին բնորոշ շարահյուսական պաշտոններ, այսինքն՝ պարագաների պաշտոններ (ծնի, տեղի, ժամանակի, չափ ու քանակի): Շարահյուսական մակարդակում անձի հատկանիշ արտահայտող

մակբայական դարձվածային միավորները հանդես են գալիս նույն պաշտոններով, ինչ մակբայ խոսքի մասը:

Ատենախոսության **երրորդ** գլխում (Անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորների ռճական և ձևախմբատային առանձնահատկությունները հայերենում, ռուսերենում, հայերենում) ուսումնասիրվում և զուգադրվում են ռճային և ձևախմբատային առանձնահատկությունները, որոնք գործուն դեր ունեն հայերենի, ռուսերենի և անգլերենի՝ անձի հատկանիշ ցույց տվող դարձվածքների ձևավորման մեջ: Այս գլխում նաև խոսվում է իմաստային առանձնահատկությունների զուգադրական ուսումնասիրության, ինչպես նաև անձի հատկանիշ ցույց տվող դարձվածքների ծագմանը, առաջացմանն առնչվող հարցերի մասին հայերենում, ռուսերենում և անգլերենում: Նկատելի է, որ դարձվածքների կազմավորման գործում մեծ դեր են խաղում ռճական և արտահայտչական մի շարք հնարներ՝ փոխաբերությունը, փոխանությունը, համեմատությունը, չափազանցումը, շրջառությունը, խորհրդանշանը (սիմվոլ) և այլն: Դիտարկվող երեք լեզուներում (հայերեն, ռուսերեն, անգլերեն) ամենամեծ թվով դարձվածքներ են ձևավորվում փոխաբերության և փոխանունության ռճական հնարներով, ինչը չի կարելի ասել ռճական այլ հնարների մասին: Համեմատություն դարձվածքները ավելի շատ հանդիպում են անգլերենում, իսկ հայերենում և ռուսերենում դրանք շատ ավելի քիչ են: Պատկերավորությունը խոսքի կարևորագույն և հիմնական արժանիքներից է և բնորոշ է գործառական բոլոր ոճերին: Կան լեզվի կիրառության ոլորտներ, ուր պատկերավորությունը, արտահայտչականությունն առաջնային են, և տվյալ գործառական ոճը հենվում է լեզվի այդ հատկանիշների վրա: Ուսումնասիրելով դիտարկվող լեզուների՝ անձի հատկանիշ ցույց տվող դարձվածքները՝ նկատում ենք, որ դարձվածքների մեծ մասը մենիմաստ է, բազմիմաստ դարձվածքները փոքր թիվ են կազմում: Բազմիմաստ դարձվածքներով հարուստ է հայերենը: Բազմիմաստությունը ավելի հաճախ հատուկ է այն դարձվածքներին, որոնք իրենց կառուցվածքով համապատասխանում են բառակապակցությանը: Դրանց շարքում կան թե՛ անվանական/գոյական, ածական, մակբայական/, թե՛ բայական կառույցներ, օրինակ. *Բերանը բաց* – 1. Հիացած, զմայլված. 2. Զարմացած, ապշած: *Светлая голова*– 1. Շատ խելոք, մտածող, տրամաբանող, 2. Խելոք մարդ: *A cool head* (բառացի՝ սառը գլուխ),– 1. Պաղարյուն, սառնարյուն, հանգիստ: 2. Պաղարյունություն, սառնարյունություն, հանգստություն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի

լեզվի որոշ բազմիմաստ դարձվածքներ ունեն իրենց համարժեքները դիտարկվող այս կամ այն լեզվում: Այդ համարժեքությունը կարող է լինել լրիվ և մասնակի: Լրիվ համարժեքները, որոնք խիստ սահմանափակ են, համընկնում են իրենց բոլոր իմաստներով: Մասնակի են այն համարժեքները, որ համընկնում են ոչ բոլոր իմաստներով, օրինակ. *խելքը գլխին* – 1. Խելք, հասկացող, խելացի, բանիմաց. 2. Ուշադիր, զգոն, սթափ, ուշիմ. 3. Կարգին, հարմար; *с золовоў*– 1. Շատ խելք, ընդունակ, 2. Գիտակցված, մտածված: Դարձվածքների բազմիմաստության երևույթի հետ կապված է նաև դարձվածքային համանունությունը: Դարձվածքների բազմիմաստությունը երբեմն կարող է հանգեցնել համանունության: Օրինակ. *Աստու կրակ* (շատ ճարպիկ)- *Աստու կրակ* (փորձանք, աղետ) *աչքը բաց* (աչքբաց, ճարպիկ, ուշիմ) - *աչքը բաց* (արթուն), *с бороδοў* (հին, հայտնի պատմություն) – *с бородоў* (*հարուստ մարդ*), *с уголочку* (տոր) – *с уголку* (*աղքատ*), *a cog in a machine* (ոչ կարևոր անձ) – *a cog in a machine* (մեքենայի պտուտակ): Դարձվածային հոմանիշները նույն քերականական հատկանիշներով են օժտված, և նրանց բաղադրիչները փոխադարձաբար փոխարինելի չեն: Դիտարկվող լեզուներում հոմանիշ դարձվածքները կարող են միավորվել հոմանշային բների, խմբերի և շարքերի մեջ: Առաջինները պարունակում են այնպիսի դարձվածքներ, որ ունեն ընդհանուր բաղադրիչ՝ *սիրտը փափուկ* – *սիրտը բարակ* (նրբազգաց), *have a good head on one's shoulders* – *have on'e head screwed on right* (խելացի լինել), երկրորդները՝ դարձվածքներ, որ իրենց կազմում չունեն ո՛չ հոմանիշ, ո՛չ ընդհանուր բաղադրիչներ՝ *երեսը պատռած* – *մազը կտրած* (անամոթ), *белая горячка* – *зеленыў змиў* (արբեցատենդ), *down at heel* – *out at elbow* (վատ, աղքատիկ հագնված), երրորդները պարունակում են թե՛ հոմանիշ և թե՛ ոչ հոմանիշ բաղադրիչներ՝ *дурья башка* – *дубовая золова* (հիմար մարդ), *the apple of on'e eye* – *the desire / light of sb's eyes* (մեկի աչքի լույսը): Դարձվածքների մեծ մասը սովորաբար ունի կայուն ձև, սակայն առանձին բառերի նման դարձվածքները ևս կարող են հանդես գալ տարբերակներով: Ուսումնասիրվող լեզուներում որոշ դարձվածքներ, ինչպես նաև անձի հատկանիշ արտահայտող դարձվածքներ, հանդես են գալիս իրենց մշտական անփոփոխ ձևով, մինչդեռ մյուսները կարող են հանդես գալ քերականական տարբեր ձևերով: Դարձվածային տարբերակներն ունեն նույն իմաստը և բաղադրիչների նույն կայուն կազմը: Նրանց բաղադրիչները նույն բառի քերականական տարատեսակներն են կամ բարբառային բառեր և կամ

փոխառյալ բառեր: Դարձվածային միավորները հիմնականում ժողովրդական պատկերավոր մտածողության արդյունք են, դրանք նախ՝ առաջանում են կենդանի լեզվում, ապա նոր՝ անցնում գրական տարբերակին: Հիշյալ լեզուների դարձվածքների ծագման ու առաջացման խնդիրները ուսումնասիրելիս գալիս ենք այն եզրահանգման, որ երեք լեզուներում դարձվածքների մեծամասնությունը կազմում են բուն կամ անդրենածին դարձվածքները, որոնք տվյալ ժողովրդի լեզվամտածողության արդյունքն են: Բուն դարձվածքների առաջացման աղբյուրն է կենդանի լեզուն՝ իր բոլոր կողմերով ու բնագավառներով, բանահյուսությունը, մամուլը, Աստվածաշունչը, ազգային ավանդույթները, սովորույթներն ու հավատալիքները, ինչպես նաև արտալեզվական ոլորտները:

Եզրակացությունների մեջ ամփոփվում են քննության ենթարկված երեք լեզուների (հայերեն, ռուսերեն, անգլերեն) անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորների ինչպես իմաստակառուցվածքային, այնպես էլ լեզվաոճական առանձնահատկությունները: Կատարած ուսումնասիրությունների և տեսական եզրահանգումների հիման վրա բացահայտվում են հայերենի, ռուսերենի և անգլերենի՝ անձի հատկանիշ ցույց տվող դարձվածքների ոչ միայն տարբերությունները, այլև ընդհանրությունները:

1. Դարձվածքները իմաստային տեսակետից բաժանվում են բաղադրամասերի և այնպիսի ընդհանուր նշանակություններ են արտահայտում, որոնք կապվում են նրանց ցույց տված որևէ հատկանիշի հետ: Կան դարձվածքներ, որոնք դրական իմաստ են արտահայտում և կապվում են *լավի ու բարու, ազնվության, արդարության առափաձեռնության, հավատարմության* հետ: Բացասական իմաստ են արտահայտում այն դարձվածքները, որոնք կապված են *չարության, ապերախություն, դավաճանության, թեթևամտության, անյրջության, աներեսության, անամոթության* հետ: Աշխատանքում դիտարկվել են նաև անձի արտաքինը նկարագրող դարձվածքներ:

2. Կենդանիների անունները լայնորեն օգտագործված են անձի հատկանիշ արտահայտող դարձվածքներում: Առանձնացվել են նաև դրական հատկանիշները, որոնք բնորոշ են այս կամ այն լեզվամշակույթին: Մի կողմից՝ դրանք, իրոք, այն հատկանիշներն են, որոնք հատկանշական են այս կամ այն կենդանուն, և որոնք բնութագրում են մարդկանց:

3. Անձի հատկանիշ արտահայտող գունանունների իմաստաբանական և խորհրդանշանային առանձնահատկություններն ուսումնասիրելիս նկատում

ենք, որ տարբեր լեզուներում դրանք օգտագործվում են և՛ ուղղակի, և՛ փոխաբերական իմաստներով: Անձի հատկանիշ արտահայտող գունանուն պարունակող դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում ունեն որոշակի ընդհանրություններ և տարբերություններ. դա վկայում է այդ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների և ազգային յուրահատկությունների մասին:

4. Հայերենի, ռուսերենի և անգլերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների զուգադրական ուսումնասիրության ընթացքում ի հայտ են գալիս դարձվածքների ընդհանրություններն ու տարբերությունները թե՛ կառուցվածքային տիպերում, թե՛ ձևաբանական ու շարահյուսական, և թե՛ իմաստային ոլորտում: Այդ տարբերությունները պայմանավորված են լեզուների կառուցվածքային և քերականական առանձնահատկություններով, դարձ-վածքների իմաստային առանձնահատկություններով և այդ լեզուներով խոսող ժողովուրդների լեզվամտածողությամբ: Ուսումնասիրված դարձվածքները պատկանում են կառուցվածքային տարբեր տիպերի: Դիտարկվող լեզուներում հանդիպում են երկանդամ, եռանդամ, քառանդամ և բազմանդամ անվանական (գոյականական, ածականական, մակբայական, եղանակա-վորող), բայական և հաղորդակցական միավորներ: Բավականին հաճախ անվանական դարձվածքները, անորոշ դերբայով ծավալվելով, վերածվում են բայական դարձվածքների: Տարբերությունները պայմանավորված են նաև համեմատվող լեզուների կառուցվածքային տիպերով: Հայերենում, օրինակ, անորոշ դերբայը կարող է լինել թե՛ հետադաս, թե՛ նախադաս և թե՛ միջադաս, իսկ ռուսերենում և անգլերենում այն կարող է լինել միայն առաջադաս: Դարձվածքներում գործում են նաև անվանական և բայական քերականական կարգեր՝ առկայացման, հոլովի, թվի, դեմքի, ածականի համեմատության աստիճանների, բայի եղանակի, ժամանակի, սեռի, կերպի: Հիշյալ կարգերից մի քանիսն ունեն իմաստատարբերակիչ դեր, և եթե այդ կապակցություններն օգտագործվեն այլ կերպ, ապա կգրկվեն իրենց դարձվածային իմաստից, եթե ոչ իմաստից ընդհանրապես:

5. Դիտարկվող լեզուների՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքներում բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերություններն արտահայտվում են ըստ այդ լեզուների տիպաբանական առանձնահատկությունների: Հայերենում այդ հարաբերություններն արտա-

հայտվում են հոլովական վերջավորություններով, որը մասամբ առկա է նաև ռուսերենում, իսկ անգլերենում հիշյալ հարաբերություններն արտահայտվում են նախդիրներով:

6. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում իմաստային միաձուլության աստիճանով մեծ մասամբ դարձվածային սերտաճումներ են, և նրանց բաղադրիչներն անօտարելի ու անփոփոխելի են: Անձի հատկանիշ ցույց տվող դարձվածքների ճնշող մասը հատուկ է միայն դիտարկվող լեզուներից որևէ մեկին, սակայն երեք լեզուների նշված միավորներն ուսումնասիրելիս նկատում ենք, որ դրանց շարքում առկա են նաև այնպիսիք, որոնք ունեն իրենց համարժեքները դիտարկվող մեկ կամ երկու լեզուներում:

7. Դարձվածքների կազմավորման գործում մեծ դեր են խաղում ռճական և արտահայտչական մի շարք հնարներ՝ փոխաբերությունը, փոխանունությունը, համեմատությունը, չափազանցումը, շրջասությունը և այլն: Դիտարկվող երեք լեզուներում (հայերեն, ռուսերեն, անգլերեն) ամենամեծ թվով դարձվածքներ են ձևավորվում փոխաբերության և փոխանունության ռճական հնարներով: Համեմատության դարձվածքներն ավելի շատ են անգլերենում, իսկ հայերենում և ռուսերենում ավելի քիչ են:

8. Դարձվածքները մեծ մասամբ մենիմաստ են: Բազմիմաստ դարձվածքները ավելի մեծ թիվ են կազմում հայերենում, իսկ ռուսերենում և անգլերենում դրանք սակավաթիվ են: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի լեզվի որոշ բազմիմաստ դարձվածքներ ունեն իրենց համարժեքները դիտարկվող այս կամ այն լեզվում:

9. Երեք լեզուներում անձի հատկանիշ արտահայտող որոշ դարձվածքներ կարող են օգտագործվել մեկից ավելի բառաքերականական ձևերով, այսինքն՝ դարձվածային տարբերակներով: Դիտարկվող լեզուներում լայնորեն տարածված են դարձվածային այն տարբերակները, որոնք կազմվում են բառային միջոցներով: Դարձվածքների քերականական տարբերակները մեկ կամ մի քանի ընդհանուր բաղադրիչ ունեցող դարձվածային միավորներն են, որոնք տարբերվում են քերականական ձևերով (հոլովի, կապի, թվի, բայական սեռի, ժամանակների): Հայերենի դարձվածքների մի մասն ունի տարբերակներ բարբառներում, արևելահայերենում և արևմտահայերենում:

10. Ըստ ծագման՝ դիտարկվող երեք լեզուներում դարձվածային միավորները, այդ թվում նաև անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորները կարելի է բաժանել մի քանի խմբի՝ բուն դարձվածքներ, որոնց առաջացման անսպառ աղբյուրը կարող է լինել ինչպես կենդանի լեզուն, այնպես էլ ժողովրդական բանահյուսությունը, առածներն ու ասացվածքները, թևավոր խոսքերը, գեղարվեստական գրականությունը: Երեք լեզվում էլ կան անձի հատկանիշ արտահայտող դարձվածքներ, որոնք առնված են նաև Աստվածաշնչից: Դարձվածային շերտի հարստացման աղբյուր կարող են ծառայել նաև ազգային ավանդույթներն ու հավատալիքները: Լեզվի դարձվածային կազմը հարստանում է նաև այլ լեզուներից կատարված փոխառությունների և պատճենումների շնորհիվ: Մասնավորապես, ռուսերենը բազմաթիվ պատճենումներ ունի անգլերենից, գերմաներենից, ֆրանսերենից: Այսպիսով, հայերենի, ռուսերենի և անգլերենի՝ անձի հատկանիշ ցույց տվող բաղադրիչներով դարձվածքների զուգադրական – տիպաբանական ուսումնասիրությունը բացահայտում է որոշակի ընդհանրություններ և տարբերություններ, որոնք ի հայտ են գալիս ինչպես դարձվածքների կառուցվածքային ու քերականական, այնպես էլ ծագման ու առաջացման, իմաստաբանական ու ոճական առանձնահատկություններում:

Առենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրատարակություններում.

1. Фразеологические единицы со значением внешность человека в армянском, русском и английском языках, «Լրաբեր» գիտական հոդվածների ժողովածու մաս III , Երևան, Ճարտարագետ, 2013 թ., էջ 964-967:
2. Фразеологизмы с названиями животных, характеризующие качества человека в армянском, русском и английском языках, «Լրաբեր» գիտական հոդվածների ժողովածու, մաս III , Երևան, Ճարտարագետ, 2013 թ., էջ 968-973:
3. Անձի հատկանիշ ցույց տվող դարձվածային միավորների ձևաիմաստային տեսակները հայերենում, ռուսերենում և անգլերենում, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, մաս 2-3 (59-60), Երևան, Ասողիկ հրատարակչություն, 2014 թ., էջ 111-119:

4. Անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքների ձևաբանական առանձնահատկությունները, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, մաս 4 (61), Երևան, Ասողիկ հրատարակչություն, 2014 թ., էջ 58-68:
5. Անձի հատկանիշ ցույց տվող դարձվածային միավորների ոճական և արտահայտչական միջոցները հայերենում, ռուսերենում և անգլերենում, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, մաս 2 (67), Երևան, Ասողիկ հրատարակչություն, 2016 թ., էջ 24-32:
6. Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների ծագման և առաջացման ուղիները հայերենում, ռուսերենում և անգլերենում, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, մաս 3 (68), Երևան, Ասողիկ հրատարակչություն, 2016 թ., էջ 38-45:
7. Անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով եղանակավորող և հաղորդակցական դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, մաս 1 (70), Երևան, Ասողիկ հրատարակչություն, 2017 թ., էջ 68-75:

Бададян Мариана Робертовна
Фразеологизмы, характеризующие свойства человека, в
армянском, русском и английском языках
(сопоставительное исследование)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 – “Общее и сравнительное языкознание”.

Защита состоится 9 октября 2017 года в 15:00 ч. на заседании специализированного совета ВАК по лингвистике 019 при Институте языка им. Р. Ачаряна Национальной академии наук РА по адресу: 0015, Ереван, ул. Григора Лусаворича 15.

Резюме

Диссертация посвящена анализу фразеологизмов, характеризующих свойства человека, в армянском, русском и английском языках. Фразеологическая система любого языка в целом обладает своими национальными особенностями. Различие фразеологической системы двух или более языков можно установить лишь при их сопоставительном изучении. Обширная группа фразеологических единиц современного армянского, русского и английского языков объединена наличием общего компонента – фразеологизмов, характеризующих свойства человека. В рамках исследуемых языков выявлены особенности фразеологизмов, включая лексические, морфологические, синтаксические уровни языка.

Научная новизна диссертации состоит в детальном сопоставительном анализе фразеологизмов, характеризующих свойства человека, в армянском, русском и английском языках; выявлении общностей и различий в семантических, структурных, грамматических и стилистических особенностях в упомянутых языках.

Теоретическое и практическое значение работы заключается в изучении фразеологизмов, характеризующих свойства человека, и ознакомлении с культурой, традициями, обычаями и с национальным своеобразием языкового мышления народов, говорящих на данных языках. Результаты работы могут быть использованы в процессе составления словарей и при выполнении переводов, а также могут способствовать прикладному изучению языка. Работа состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

Во введении обосновывается актуальность темы, отмечается новизна исследования, представляются основные цели и задачи работы, кратко излагаются принципы и методы исследования.

В первой главе, состоящей из пяти разделов, проводится сопоставительный анализ структурно-грамматических особенностей фразеологизмов, характеризующих свойства человека на армянском, русском и английском языках. В ходе исследования выявлены различия и соответствия структурных подклассов субстантивных, адъективных, глагольных и

коммуникативных фразеологизмов, характеризующих свойства человека. Исследования показывают, что фразеологизмы (компаративные и некомпартативные), характеризующие свойства человека, могут иметь разные структурные и грамматические особенности. Иногда указанные особенности совпадают в рассматриваемых языках, но в большинстве случаев они различаются. Различия указанных особенностей зависят от типологических особенностей изучаемых языков.

Во второй главе, состоящей из четырех разделов, рассматриваются и проводится сопоставительный анализ морфологических и синтаксических особенностей фразеологизмов, характеризующих свойства человека, на армянском, русском и английском языках. Фразеологизмы выполняют функции подлежащего, сказуемого, дополнений, обстоятельств.

В третьей главе на основе сопоставительного анализа армянского, русского и английского языков представляются количественные варианты, фразеологические синонимы, антонимы и омонимы. Семантическая парадигма фразеологизмов формируется на основе общих интегральных семантических признаков, различающихся в зависимости от семантически дифференциальных признаков. Фразеологизмы, характеризующие качества человека, на армянском, русском и английском языках вступают в различные типы парадигматических отношений. Составные единицы позволяют нам объединять фразеологизмы в омонимичные, синонимичные и антонимичные блоки. Анализируются и сопоставляются происхождение и источники фразеологизмов, стилистические и экспрессивные особенности фразеологических оборотов, а также и многозначность фразеологизмов в упомянутых языках.

В заключении обобщаются результаты исследования. В научном отношении изучение фразеологии важно для познания самого языка. Фразеологизмы существуют в языке в тесной связи с лексикой, их изучение помогает лучше познать их строение, образование в употреблении в речи. Знакомство с армянской, русской и английской фразеологией позволяет нам глубже понять историю и характер народов. Сопоставительный анализ фразеологизмов, характеризующих свойства человека, выявил их значительное сходство на семантическом уровне. Несмотря на различный строй языков, а следовательно, и различные способы выражения синтаксических отношений между компонентами фразеологических единиц в армянском, русском и английском языках, можно обнаружить соответствия эквивалентов различных типов в указанных языках. Наличие или отсутствие структурно-семантических эквивалентов в сопоставляемых языках может быть прогнозировано по некоторым характеристикам самих фразеологических единиц исходного языка. Эти характеристики касаются компонентного состава, синтаксической структуры и совокупных стилистических свойств фразеологических единиц.

Mariana Robert Badadyan
Phraseological Units Expressing the Qualities of a Person in
Armenian, Russian and English
(contrastive investigation)

Thesis for the scientific degree of a candidate of philological sciences on the specialty 10.02.02 - "General and Comparative Linguistics"

The defence of the thesis will be held on 9 October, 2017 at 15:00, at the session of the Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation Commission) in the Institute of Linguistics after H. Acharyan of the National Academy of Sciences, RA (address: 0015, Yerevan, Grigor Lusavorich st.15).

Summary

The thesis is devoted to the analysis of the phraseological units expressing the qualities of a person in Armenian, Russian and English. The phraseological system of any language, on the whole, has its own national characteristics. The differences between the phraseological systems of two or more languages can be revealed only by their comparative study. An extensive group of phraseological units of modern Armenian, Russian and English languages is combined by the presence of a common component – the phraseological units characterizing a person. In the frames of the languages studied lexical, morphological, syntactic peculiarities of the phraseological units have been revealed.

The novelty of the work lies in a detailed and comparative analysis of the phraseological units expressing the qualities of a person in Armenian, Russian and English, revealing the differences and similarities, structural, grammatical and stylistic characteristics of phraseological units, as well as the national features of the peoples speaking mentioned languages.

The theoretical value of the research is that phraseological units provide information about the customs and traditions of the peoples. They also give an opportunity to get familiar with the cultures of various nations.

The practical significance of the thesis is that the results of the study can be efficiently used in the process of compiling dictionaries or doing translations as well as they may contribute to practical language teaching and learning. The dissertation consists of an introduction, three chapters, conclusion and bibliography.

The Introduction presents some issues connected with the theory and historical development of phraseology as a scientific discipline in the frames of linguistics, the correlation of phraseological units with words, word combinations, sentences and idioms.

The first chapter consists of five parts. It provides a comparative analysis of structural and grammatical peculiarities of the phraseological units expressing the qualities

of a person in Armenian, Russian and English. The study reveals the differences and similarities between the structural subclasses of the substantive, adjectival, verbal and communicative properties of the phraseological units characterizing a person. The studies show that phraseological units characterizing a person may have different structural and grammatical features. Sometimes these features coincide in the languages studied, but in most cases, they are different. The differences of these features depend on the typological characteristics of the studied languages. Nominative phraseological units, as well as some communicative ones are also considered, which are looked upon as different colloquial routine spoken phrases, set expressions, containing the wisdom of the time, proverbs and sayings, the structure of which corresponds to that of a sentence.

In the second chapter the morphological and syntactic characteristics of the phraseological units expressing the qualities of a person in Armenian, Russian and English are considered. It is shown that the phraseological units can serve as a subject, verb, adverbial modifiers and complement in a sentence.

In the third chapter, on the basis of a comparative analysis of the Armenian, Russian and English languages, phraseological variants, synonyms, antonyms, homonyms and polysemantic phraseological units are introduced. The semantic paradigm of phraseological units is formed based on the general integral semantic features, and differs by the semantic differential features. The phraseological units expressing the qualities of a person in the Armenian, Russian and English languages are included in various types of paradigmatic relations. The component units allow to integrate the phraseological units in blocks of homonyms, synonyms and antonyms. The sources of the investigated phraseological units, as well as the expressive means and stylistic devices, the application peculiarities, polysemantic phraseological units, lexical, grammatical, structural and quantitative variants of phraseological units are analyzed and compared. The results of the study are summarized in the **conclusion**. Scientifically, the study of phraseology is important for the knowledge of a language itself. Phraseological units exist in any language in close connection with lexicology, their study helps to learn their structure, their use in speech. The study of phraseological units expressing the qualities of a person in Armenian, Russian and English allows to understand the history and character of peoples speaking these languages better. The comparative analysis of the mentioned phraseological units expressing qualities of a person in the Armenian, Russian and English languages has revealed the considerable similarity at the semantic level. In spite of different structures of the languages and, consequently, different ways of expressing the syntactic relations between the components of the phraseological units in Armenian, Russian and English, one can find different types of equivalent units in the three languages. The presence or absence of structural and semantic equivalents in the compared languages may be explained by some characteristics of the phraseological units of the source language. These characteristics are related to the component composition, the syntactic structure and the combined stylistic properties of phraseological units.